ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«15» օգոստոսի 2018 թվականի N 12-Ա

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ նախարարություն)՝

1) ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ու շահագործման կարգը և պայմանները՝ համաձայն հավելված 1-ի,

2) ծառայողական ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտի ձևը (Ձև ՇՁ-1)՝ համաձայն հավելված 2-ի,

3) տրանսպորտային միջոցների վառելիքի բաշխման ցանկի ձևը (Ձև ՇՁ-2)՝ համաձայն հավելված 3-ի,

4) ավտոմեքենայի շահագործման ուղեգրի ձևը (Ձև ՇՁ-3)՝ համաձայն հավելված 4-ի,

5) ավտոմեքենաների վառելիքի ծախսի նորմաների ձևը (Ձև ՇՁ-4)՝ համաձայն հավելված 5-ի·

6) ավտոմեքենաների ուղեգրերի տրամադրման համար վարվող ամսական հաշվառման մատյանի ձևը (Ձև ՇՁ-5)՝ համաձայն հավելված 6-ի:

7) ավտոմեքենաների բաշխման ցանկը՝ համաձայն հավելված 7-ի:

2. Նախարարության ծառայողական ավտոմեքենաների շահագործման ու տեխնիկական սպասարկման գործընթացի պատասխանատու սահմանել նախարարության քարտուղարության տնտեսական բաժինը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարության գլխավոր քարտուղարին:

ԱՐՏԱՇԵՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
Գլխավոր քարտուղարի 15 օգոստոսի № 12-Ա հրամանով

ԿԱՐԳ
ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) թվով 9 (ինը) ծառայողական ավտոմեքենաների շահագործման, բաշխման և ընթացիկ նորոգման կարգն ու պայմանները:

2. Նախարարությանը հատկացված ավտոմեքենաները համապատասխան պաշտոնատար անձանց շահագործման են հանձնվում՝ համաձայն հավելված 7-ի՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի 4-րդ կետի ա), բ) և դ) ենթակետերը:

3. Ծառայողական ավտոմեքենաների շահագործման և տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպում է նախարարության քարտուղարության տնտեսական բաժինը (այսուհետ՝ Պատասխանատու ստորաբաժանում):

4. Պատասխանատու ստորաբաժանումը ծառայողական ավտոմեքենան նախարարության գլխավոր քարտուղարի հրամանով համապատասխան հանձնման-ընդունման ակտով (Հավելված 2, Ձև՝ ՇՁ-1) երկու աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում և շահագործման համար պիտանի վիճակում հանձնում է ավտոմեքենայի համար նյութական պատասխանատվություն կրող անձին (այսուհետ՝ Պատասխանատու):

5. Պատասխանատուի մեղքով ավտոմեքենային պատճառված վնասը վերականգնվում է վերջինիս անձնական միջոցների հաշվին:

6. Ծառայողական ավտոմեքենաները Պատասխանատու ստորաբաժանման կողմից Պատասխանատուներին շահագործման են հանձնվում շաբաթական և ամսական ուղեգրերի հիման վրա: Նախարարության առանձնացված ստորաբաժանումների միջմարզային բաժիններին տրվում են ամսական ուղեգրեր, իսկ նախարարության մնացած ավտոմեքենաներին՝ շաբաթական ուղեգրեր:

7. Տրամադրվող ուղեգրերի համար տարվում է հաշվառում:

8. Հաշվառումն իրականացվում է նախարարության հաշվապահական հաշվառման բաժնի համապատասխան աշխատակցի կողմից:

9. Համապատասխան աշխատակիցը, նոր ուղեգրերը նախարարության գլխավոր քարտուղարի կողմից հաստատվելուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարում է հաշվառում համապատասխան հաշվառման մատյանում՝ համաձայն հավելված 6-ի (Ձև ՇՁ-5):

10. Ծառայողական ավտոմեքենայի շահագործման համար անհրաժեշտ վառելիքը տրամադրվում է Պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված և նախարարության գլխավոր քարտուղարի կողմից հաստատված վառելիքի բաշխման ցանկով (Հավելված 3, Ձև՝ ՇՁ-2), շաբաթական և ամսական ուղեգրերի հիման վրա (Հավելված 4, Ձև՝ ՇՁ-3), որոնք, մինչև ընթացիկ ամսվա 27-ը, ներկայացվում են նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը և հաջորդ ամսվա առաջին աշխատանքային օրը հանձնվում Պատասխանատուին՝ նախորդ ամսվա երթուղային թերթը նրա կողմից վերադարձնելուց հետո:

11. Վառելիքը, ըստ հաստատված ցանկի, Պատասխանատուին կտրոնների տեսքով տրամադրում է նախարարության տնտեսական բաժինը:

12. Ծառայողական ավտոմեքենաների շահագործման համար անհրաժեշտ վառելիքը տրամադրվում է Պատասխանատու ստորաբաժանման ու նախարարության հաշվապահական հաշվառման բաժնի կողմից ներկայացված և նախարարության գլխավոր քարտուղարի կողմից հաստատված ծառայողական ավտոմեքենաների վառելիքի ծախսի տարեկան նորմերին համապատասխան (Հավելված 5, Ձև՝ ՇՁ-4)՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N 1001-Ն որոշումը:

13. Պատասխանատու ստորաբաժանումը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները սահմանելու մասին» N 1001-Ն որոշման պահանջները, ավտոմեքենաների բնականոն շահագործումն ապահովելու նպատակով նախարարության գլխավոր քարտուղարին տեղեկացնում է համապատասխան յուղերի, քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների շահագործման սահմանված նորմաների ժամկետը լրանալու և նորով փոխարինելու անհրաժեշտության մասին:

14. Նախարարության կողմից ծառայողական ավտոմեքենաների շահագործման ժամկետը սահմանվում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Պետական կառավարչական և այլ պետական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված՝ պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան նորմաները հաստատելու մասին» N 957-Ն որոշմամբ հաստատված տրանսպորտային միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան նորմային համապատասխան հաշվարկված ծառայության ժամկետից (8.5 տարի):

15. Ծառայողական ավտոմեքենայի տեխնիկական սպասարկումն ու ընթացիկ նորոգման աշխատանքներն իրականացվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից:

16. Ծառայողական ավտոմեքենայի տեխնիկական սպասարկումն իրականացվում է Պատասխանատուի կողմից Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին ներկայացվող անսարքության մասին զեկուցագրի հիման վրա:

17. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը ստորաբաժանման աշխատակցից վերոնշյալ անսարքությունների մասին հավաստիացում ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տվյալ անսարքությունները վերացնելու, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով զեկուցագրով դիմում է նախարարության գլխավոր քարտուղարին:

18. Ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կենտրոն է ուղարկվում նախարարության գլխավոր քարտուղարի կողմից մակագրված գրության հիման վրա՝ Պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

19. Ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման աշխատանքներն իրականացնելուց հետո Պատասխանատու ստորաբաժանման համապատասխան աշխատակիցը ընդունում է վերանորոգված ավտոմեքենան՝ համապատասխան հանձնման-ընդունման ակտով:

20. Հանձնման–ընդունման ակտը և սպասարկողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագիրը ներկայացվում են նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

21. Նախարարության գլխավոր քարտուղարի կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ ապրանքագիրը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են հավապահական հաշվառման բաժին՝ համապատասխան դրամական փոխանցումներն իրականացնելու համար:

22. Պատասխանատու ստորաբաժանումը կազմակերպում է Նախարարության ծառայողական ավտոմեքենաների տարեկան տեխզննման և պետական պարտադիր ապահովագրման աշխատանքները և հետևում է, որ համապատասխան կտրոնները ժամանակին և ըստ սահմանված կարգի փակցված լինեն դիմապակուն:

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
Գլխավոր քարտուղարի 15 օգոստոսի № 12-Ն հրամանով
ՁԵ՝ ՇՁ-1

ԱԿՏ
հանձնման - ընդունման

կատարված <<_____>> <<_____>> 201 թ.

1.Ավտոտնտեսության անունը, որին պատկանում է տրանսպորտային միջոցը

_____

2. Հանձնող _____

3. Ընդունող _____

4. Ա/մ տեսակը (բեռնատար, մարդատար, հատուկ ավտոբուս) _____

5. Մակնիշ _____

6. Պետական համարանիշ N_____

7. Տեխնիկական անձնագիր N_____

8.Շարժիչ N_____

9.Հենասահք N_____

10. Թափք N_____

11. Արտադրման տարեթիվ_____

12.Գույնը _____

13. Արտադրման ժամանակահատվածից կատարված վազքը _____

14.Վերջին կապիտալ վերանորոգումից հետո կատարած վազքը _____

15. Արտադրման ժամանակահատվածից մինչ

այժմ կատարված ընդհանուր վերանորոգումները _____

16. Ընդհանուր տեխնիկական վիճակը _____

17. Բացահայտված տեխնիկական անսարքությունները՝

ա) ա/մ արտաքին վիճակը _____

բ) ղեկային մեխանիզմ _____

գ) առջևի կախոց, մեղմիչներ, առջևի կամրջակ _____

դ) շարժիչ, սնուցման համակարգ և հովացում

(կատարված է շարժիչի կատարյալ վերանորոգում) _____

ե) շաղկապում-կցորդում _____

զ) փոխանցման տուփ _____

է) էլ. սարքավորումներ _____

ը) հետևի կամրջակ, կարդանային լիսեռ _____

թ)թափք, խցիկ _____

ժ)արգելակման համակարգ _____

ի) մարտկոց _____

լ) անվադողեր _____

18. Ա/մ շարժական մասի վերանորոգման կարգը _____

19. Ա/մ կարգը _____

20.Գործիքներ _____

21. Վերոնշյալ ավտոմեքենայի համար նյութական պատասխանատվությունը կրում է վարորդը:

Ավտոմեքենան հանձնեց			Ավտոմեքենան ընդունեց		
_____	_____	_____	_____	_____	_____
Պաշտոնը	Ան., Ազգ.	Ստորագրութ.	Պաշտոնը	Ան., Ազգ.	Ստորագրութ.

Հավելված 3
Հաստատված է
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
Գլխավոր քարտուղարի 15 դեկտեմբեր № 12-Ա հրամանով
ՁԵՎ՝ ՇՁ-2

ՑԱՆԿ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության տրանսպորտային միջոցների վառելիքի բաշխման

<<_____>> <<_____>> 201 թ.

Հ/Հ	Ավտոմեքենայի մակնիշը	Պետհամարանիշը	Երթուղային թերթի N	Վարորդի անունը, ազգանունը	Վառելիքի տեսակը	Քանակը (լիտր)	Ստորագրություն

Հավելված 4
Հաստատված է
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
Գլխավոր քարտուղարի 15 օգոստոսի № 12-Ա հրամանով
ՁՆ՝ ՇՁ-3

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ք.Երևան կառավարական շենք 3

ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՎՏՈԲՈՒՍԻ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

<< >> 2018թ

Ավտոմեքենայի ____________ ____________ ____________
պետհամարանիշը գույքային համարը

Վարորդ՝ ____________ ____________
տաբելային համարը

ժամանակաշրջանի (օրվա) սկզբում մեկնումը թույլատրում եմ մեխանիկ՝ ____________ ____________
ստորագրությունը անունը, ազգանունը

____________ ____________

Վազքի ցուցիչի ցուցմունքը ժամանակաշրջանի (օրվա) սկզբում (կմ)՝ ____________

Ավտոմեքենան (ավտոբուսը) տեխնիկապես նորմալ վիճակում ընդունեց վարորդ՝ ____________
ստորագրությունը

Այլ նշումներ ____________

____

____

Վառելիքի մնացորդը ժամանակաշրջանի (օրվա) սկզբում՝

Տեսակը, մակնիշը	Քանակ (լիտր, կգ)

Լիցքավորվել է ժամանակաշրջանի (օրվա) ընթացքում՝

Տեսակը, մակնիշը	Քանակ (լիտր, կգ)

Վառելիքի մնացորդը ժամանակաշրջանի (օրվա) վերջում՝

Տեսակը, մակնիշը	Քանակ (լիտր, կգ)

Վազքի ցուցիչի ցուցմունքը ժամանակաշրջանի (օրվա) վերջում (կմ)՝ ____________

Վառելիքի ծախսը ժամանակաշրջանի (օրվա) ընթացքում՝

Տեսակը, մակնիշը	Քանակ (լիտր, կգ)	
	նորմայով	փաստացի

-Աղյուսակ 1

Ամսաթիվ	Աշխատանքը թույլատրող բժշկի ստորագրությունը	Աշխատանքը թույլատրող մեխանիկի ստորագրությունը	Պատվիրատու ստորաբաժանման (կազմակերպության) անվանումը	Երթուղի (պատվիրատուի հանձնարարությունը)	Վազքի ցուցիչի ցուցմունքը		Լիցքավորված վառելիքի քանակը			Վառելիքը լիցքավորողի ստորագրությունը	Մեքենան օգտագործողի	
					մեկնելուց առաջ	վերադառնալուց հետո	բենզին (լիտր)	դիզ. վառելիք (լիտր)	հեղուկ գազ (կգ)		անունը, ազգանունը	ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

Հավելված 5
Հաստատված է
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
Գլխավոր քարտուղարի 15 օգոստոսի № 12-Ն հրամանով
ՁԵ՝ ՇՁ-4

Նորմաներ
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ավտոմեքենաների 201 թ ընթացքում 100 կմ վազքի համար վառելիքի ծախսի

ՀՀ	Ավտոմեքենաների մակնիշը, պետհամարանիշը	Արտադրման տարեթիվը	100 կմ ծախսի նորմը (լիտր)	8 տարուց ավել օգտագործվող մեքենայի ծախսի նորմը 5 %	0,5 միլիոնից ավել բնակչություն ունեցող քաղաք 15 %	մինչև 0,5 միլիոն բնակչություն ունեցող քաղաք 10 %	Լեռնային տեղամասում աշխատանքի համար 5 %	ընդամենը ծախսի նորմը	Ձմեռային ռեժիմ 10%	ընդամենը ծախսի նորմը

Տնտեսական բաժնի պետ _____

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ _____

Հավելված 6
Հաստատված է
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
Գլխավոր քարտուղարի 15 օգոստոսի № 12-Ա հրամանով
Ձև՝ ՇՁ-5

ՄԱՏՅԱՆ

ՀՀ ԷԵԲՊՆ նախարարության ավտոմեքենաների ,,—,, թ. ընթացքում վազքի և բենզինի ծախսի

Հ/Հ	Ավտոմեքենաների անվանումը, մակնիշը	Թողարկման տարեթիվը	Ցուցմունքը առ 01.01.–թ	կմ/լիտր	Ամսական կատարած վազքը														Ցուցմունքը առ 31.12.–թ
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	XII	Ընդամենը ,,—,, թ.	
1				կմ														0	0
				լիտր														0	
2				կմ														0	0
				լիտր														0	
3				կմ														0	0
				լիտր														0	
				լիտր														0	
	Ընդամենը			կմ	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	
				լիտր	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	

Հավելված 7
Հաստատված է
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
Գլխավոր քարտուղարի 15 հունվարի № 12-Ա հրամանով

ՑԱՆԿ
ծառայողական ավտոմեքենաները համապատասխան պաշտոնատար անձանց հատկացման

Հ/Հ	Ավտոմեքենայի մակնիշը, պետհամարանիշը	Արտադրման տարեթիվը	Ում է հատկացված
1	Տոյոտա Կորոլլա, 011LL55	2016	Նախարար
2	Շևրոլե-Նիվա 21230, 641 LL 11	2007	Նախարարի տեղակալ
3	Շևրոլե-Նիվա 21230, 642 LL 11	2007	Նախարարի տեղակալ
4	Շևրոլե-Նիվա 21230, 643 LL 11	2007	Նախարարի տեղակալ
5	Նիսսան X-TRAIL 2.5I 229 LL 60	2012	Նախարարի տեղակալ
6	Հունդայի Էլանտրա, 222 LL 60	2007	Գլխավոր քարտուղար
7	Նիսան Պատֆայնդեր, 221 LL 60	2001	Էներգետիկայի պետական տեսչության պետ
8	Գազ 31105-120, 220 LL 60	2006	Ընդերքի գործակալության պետ
9	Վազ 21213-120, 226 LL 60	1998	Սպասարկող